ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԿԱՅԻՓՈՍԻ Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Երզնկա քաղաքէն երեք ժամ հեռու, Գոհանամի ստորոտը, Շողակաթ լերան զառիվերին վրայ կառուցուած է Կայիփոսի Վանքը, որ շատ անգամ կոչուած է նաև Դարբոսի Անապատ, Դայիբոսի Վանք, Կապոսոյ Վանք, Կափոսի Մենաստան, ևլն։ Ըստ Գրիգոր Դարանաղեցիի, Կայիփոսի կոչուած է տեղւոյն պատճառաւ, որովհետև վանքը «կայ ի փոսի» (Ժամանակագրութիւն, էջ 512)։

Գարեգին Վրդ. Սրուանձտեանց մէկ քանի տողով անցողակի կը յիշատակէ Կայ ի փոսի Ս. Յակոբայ Վանքը, Թորոս Աղբարի Բ. Հատորին մէջ. «Ջուրն, օդն, արօտն հիանալի և սառն. գեղեցկակերտ է Ս. Տաճարն, յորում կայ փոս մը ջրհորի ձևով, ուր կը ճգնէր եղեր Ս. Յակոբ. յաջմէ խորանին առիւծ և ի ձախմէ եղն, քարակոփ՝ խոյակաց վրայ» (էջ 51)։

Կայիփոսի Վանքը ունէր վեհ ու պատկառելի դիրք և շրջապատուած էր քարաշէն, ամուր պարիսպներով, կը գրէ Գ. Սիւրմէնեան. — Երզնկա, 1947, էջ 97։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Կայիփոսի Վանքին վերաբերող պատմական յիշատակութեան մը կը հանդիպինք Ժե. դարուն սկիզբները։ Յիշատակագիր մը կը պատմէ թէ 1425 թուին Ամթայ տէրը եկաւ Երզնկայի վրայ և հրդեհեց ու աւերեց աւաններն ու վանքերը, որոնց կարգին և հռչակելի Կապաստու Մենաստանը։ Քաղաքը երեք տարի պաշարուած պահեց և ապա հեռացաւ, որմէ յետոյ գաւառը սկսաւ վերստին ծաղկիլ և Կապոսի Վանքն ալ առաջուանէ աւելի պայծառ շինուածով նորոգուեցաւ (Զարբ., Նոր Դպրութիւն, էջ 153)։

ԺԶ. դարուն սկիզբը, Գրիգոր Վրդ. Մշեցի շինած է Կապոսու հարաւային ժամատունը և չորս խուց, գործակցութեամբ իր աշակերտին՝ Մաղաքիա Վրդ. Դերջանցիի. — Հանդ. Ամս. 1948, էջ 540։

Կայիփոսի վանահայրերէն սակաւաթիւ անուններ միայն յիշատակուած կը գտնենք, որոնք են,

1. — Սամուէլ, 1255. — Ասոր հրամանով Գրիգոր Գրիչ Վզիկ օրինակած է Ճաոընտիր մը։

2. — Տէր Ներսէս Բաբունապետ Համշեցի, կը յիշուի 1495–99 թուականներուն. — Սարգ. Բ. էջ 622։ Թ. Աղբար, Բ. էջ 328 և 305։ Գր. Դար. էջ 405։ Ա. Բարատ 1913 էջ 601։ Իր մասին Երզնկացի Մեսրոբ Գրիչ կը շարէ հետևեալ տողերը.

«Եւ Տէր Ներսէս Առաջնորդի,
Աղնուական ի մեծ տոհմի,
Սուրբ և մաքուր յոյժ գովելի,
Որ հրեշտակաց է բաղձալի»։

(Թ. Աղբար, Բ. էջ 328)։ Իր օրով վանքը ունէր երեսունէ աւելի աբեղաներ (Թ. Աղբար, Բ. էջ 305)։ Վանքին դասակալն էր մեծ և քաջ բաբունապետն Յովհաննէս, որ կը վախճանի 1497 թուին։

3. — Պարոնտէր Մկրտիչ, 1534ին, երբ Կայիփոսի Վանքը կ'այցելէ Սրապիոն Վրդ. Մոկացի իր աշակերտներով հանդերձ. — Հանդ. Ամս. 1892 էջ 51։

Գր. Դարանաղեցի Կայիփոսի Վանքին միաբաններէն կը յիշէ մի քանի անձեր, ինչպէս Մաղաքիա Վրդ. Դերջանցիի աշա-

---

ապստամբութիւնը ինքնին։ Գրող մը որ իր մանկութեան մեծ չափով ենթարկուած է կրօնական և ընտանեկան ազդեցութիւններու, և յետոյ իբրև ազատ մտածող յարձակման կ'ենթարկէ զանոնք, իր ապստամբութիւնը գերիի մը արարքէն անդին չանցնիր։ Բոլոր մեծ բարոյախօսները կը զգուշացնեն զմեզ ազատ պահելու մեր դատողութիւնը կիրքերէն։ Կազմակերպել ու կարգաւորել մեր մտածումները պարզէն մինչև ամենէն բարդերը, բաժնել հարցերը այնքան մանրամասնօրէն, որքան կարելի է։ Ձեր թուումներու պարագային եղէք ամբողջական և ձեր քննութիւններուն մէջ այնքան ընդհանուր, որպէսզի վստահ ըլլաք թէ ոչ մէկ բան զանց առնուած է։ Այս կերպը շատ օգտակար եղած է թէ Տէքարթին և թէ անկէ վերջը եկող գիտնականներուն։

Ա. Մ.

(Շարունակելի՝ 1)

digitised by A.R.A.R.@

կերտ Աստուածատուր Վրդ. Սեբաստացի, վախճանած 1587ին (էջ 341), Աստուածատուր Վարդապետի աշակերտ Հայրապետ Վրդ. Տիւրիկցի (էջ 341), Շիրակ Վրդ. Ամթացիի աշակերտ Պետրոս Պիչուղ, որ «կատարեալ ժամասաց երաժիշտ էր և տումարագէտ և արագախօս և խրոխտ և ահարկու բարձրաբարբառ քարոզող» (էջ 406), վախճանած 1591ին (էջ 407), ուրիշ վարդապետ մը, Որոգայթ կոչուած, նոյնպէս վախճանած 1591ին (էջ 406–7)։

Երուսաղէմի միաբան Սահակ Եպիսկոպոս, 1689ին, Կայլիփոսի Վանքին մէջ վարդապետ կը ձեռնադրէ Աւետիք Եւդոկիացին. — Միաբ. էջ 436։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Կայլիփոսի Վանքը զուրկ չէ եղած մշակութային կեանքէ։ Դարանաղեցիի համաձայն Կայլիփոսի Վանքը եղած է «Դասատուն վարդապետաց» (ժմ. էջ 512)։ Մեզի հասած գրչագրական աշխատանքները կը բաւեն վկայելու թէ կային հոն ջանասէր ձեռքեր, որոնք հայ գրի ծառայութեան էին նուիրուած։ Անոնց մէջ ժամանակով հնագոյնն է,

Ա. — Վարդան Քահն. Կապոսցի, Ծաղկող, որ օժանդակած է, 1224ին, Թադէոս Գրչի և իր օգնականներուն ընդօրինակած Ճառընտիրի ծաղկումին. — Հ. Թրգմ. էջ 729։ Սարգ. Բ. էջ 33–34։ Ցիշտ. Ձեռագրաց Ա. էջ 835։

Բ. — Գրիգոր Գրիչ Վզիկ, 1255ին օրինակած է Ճառընտիր մը, Կապոսի Վանահայր Սամուէլի հրամանով. — Սարգ. Թ. 221։

Գ. — Յակոբոս Կրօնաւոր, 1270ին օրինակած է Շարակնոց մը. — Հանդ. Ամս. 1938, էջ 102։

Դ. — Ներսէս Սարկաւագ, Գրիչ, աշակերտ Յովհաննէս Փիլիսոփայի. 1343ին օրինակած է Շարակնոց մը. — Տաշ. Թ. 173։

Ե. — Մովսէս Կրօնաւոր, Ծաղկող, եղբայր Յովհաննէս Փիլիսոփայի. 1343ին ծաղկած է Ներսէս Սարկաւագի օրինակած Շարակնոցը. — Տաշ. Թ. 173։

Զ. — Յակոբ Ղրիմեցի, Գրիչ, 1389–93. — Օրինակած է Ժողովածու մը 1389ին. — Հ. Զ. Հիշատակարաններ, Լ. Ս. Խաչիկյան, Երեվան, 1950, էջ 580։ Իր մասին տես անդ նաև էջ 603։

Է. — Գրիգոր Գրիչ, 1416ին օրինակած է Քարոզագիրք մը Գրիգոր Տաթեւացիի. — Կար. Թ. 2069։

Ը. — Մանուէլ ? Գրիչ, 1466ին օրինակած է Գանձարան մը. — Էջմիածին 1951 Ապրիլ–Յունիս, էջ 88։ Ցիշատակուած «գրոց աշակերտ»ներուն մէջ կայ Տէր Մաղաքիա, որ թերևս նոյն է վարդապետ յիշուած համանուն գրչին հետ։ Ցիշատակարանին մէջ կը կարդացուի նաև Սամուէլ Նաղաշի անունը, որ իբրև նկարող ծանօթ էր Երզնկայի շրջանակին մէջ 1446–73 թուականներուն, և նկարած է Մանուէլ Երզնկացի օրինակած մէկ Աւետարանը. — Թ. Աղբար, Բ. 420։

Թ. — Հայրապետ Գրիչ, 1496ին օրինակած է Սաղմոս մը, Տէր Կիրակոսի համար. — Թ. Աղբար, Բ. էջ 305։

Ժ. — Մեսրոբ Գրիչ Երզնկացի, որդի Ամիրդովլաթի. 1499ին օրինակած է Աւետարան մը. — Թ. Աղբար, Բ. էջ 328։

ԺԱ. — Տէր Սիմէոն Խարբերդցի, Նաղաշ, 1499ին ծաղկած է Երզնկացի Մեսրոբ Գրչի օրինակած Աւետարանը։ Գրչի յիշատակարանին մէջ իր մասին կը կարդանք հետևեալ գովասանական տողերը.

«Այլ և զնաղաշն գովելի,
զՏէր Սիմէոնն Խարբերդցի,
Որ զարդարեաց ծաղկաւք իլի,
Գոյն զգուշով զարմանալի»։
(Թ. Աղբար, Բ. էջ 328)։

ԺԲ. — Խաչատուր Սեբեղայ, Գրիչ, 1495ին օրինակած է Ոսկեփորիկ մը. — Սարգ. Թ. 241։

ԺԳ. — Մաղաքիաս Գրիչ, 1497ին օրինակած է,

1. — Առ Որս Ճառք, Գրիգոր Նազիանզացիի, և Ցաղագս Երկնային Քահանայապետութեանց, Դ. Արիսպագացիի. — Կար. Թ. 92։

2. — Աւետարան, մաքուր բոլորգրով, Մկրտիչ Սեբեղայի համար, «որ մականուն Տանձիկ ասի». — Ձեռ. Ս. Ց. Թ. 298։

ԺԴ. Յովհաննէս Վարդապետ, Գրիչ, 1497ին օրինակած է Գր. Նազիանզացիի Ճառերը, Առ Որս, և Կիւրեղ Աղեքսանդրացիի Պարապմանց Գիրքը. — Կար. Թ. 89։

ԺԵ. — Ալեքսիանոս Գրիչ, ծառայ Սրապիոն Վրդ. Մոկացիի. օրինակած է 1534ին, Կայլիփոսի Վանքին մէջ, իր վարդապետին համար, Քարոզագիրք մը Գր. Տաթեւացիի. — Հանդ. Ամս. 1892, էջ 51–2։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@